Ռաֆֆի

Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ . . .

Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ . . .

Ձա՛յն տուր, ով ծովակ, ինչո՞ւ լռում ես.
Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս:
Շարժեցե՛ք, զեփյուռք, ալիքը վետ-վետ.
Խառնեք արտասուքս այս ջրերիս հետ:

Հայաստանի մեջ անցքերին վկա,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ, ինձ ասա՛.
Մի՞թե միշտ այսպես կը մնա Հայաստան՝
Փշալից անապատ, երբեմն բուրաստան:

Մի՞թե միշտ այդպես ազգը խղճալի,
Կը լինի ծառա օտար իշխանի,
Մի՞թե Աստուծո աթոռի մոտին
Անարժան է հայն եւ հայի որդին:

Արդյոք գալո՞ւ է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ,
Եվ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմել դեպ իրենց սիրուն հայրենիք:

Դժվար այդ. միայն, տեսուչըդ վերին,
Կենդանացրո՛ւ հայության հոգին,

Ծագի՛ր նոցա դու քո լոյս գիտության,
Որով իբր էակ նոքա բանական,
Կը ճանչեն մարդուս կյանքի խորհուրդը,
Կը լինին գործովք տիրոջ փառաբան:

Հանկա՛ծ ծովակի երեսին մի լույս.
Ջրից դուրս եկավ նազելի մի կույս,
Մի ձեռնում ուներ նա վառած լապտեր,
Իսկ մյուսում՝ քընար փայլուն փրղոսկեր:
Արդյոք հուրի՞ էր, հրեշտակ աննշան,—
Ո՞չ, հայ մուզաների տիպ համանման:
— Հայոց ճակատագիրը կարդա՛, ով մուզա,
Ներկա և գալոց գուշակիր, ասա՛:
(Ասաց երկնային այն ոգի քաղցրիկ):

— Ավետիք տամ քե՛զ, նժդեհ պատանի.
Սրբի՛ր աչքերից արտասուքդ աղի:
Կրգան նոր օրեր, օրեր երջանիկ,—
Երբ Տիրոջ կամքը, ազատ ու արդար
Կը թագավորե – կրկին ոսկեդար:

— Հայոց մուզայքը կզարթնուն կրկին.
Հայոց պառնասը կը ծաղկի վերստին,
Եվ Ապողոնյան կառքը լուսարար,
Կրբոլորե Հայոց թուխ երկնակամար:

— Մենք ևս քո պես, — երբ խորին գիշեր
Պատեց Հայաստան, — սգավոր օրեր
Շատ ենք անցուցել. այժմ սիրելի,
Մենք ևս Հաշտության ստացանք ձիթենի:
Սիրեցե՛ք քնարի լարերը ժանգոտ.

Ելե՛ք Հայաստան երգով եռանդոտ,
Զարթեցրեք Հայոց աշխոյժը մեռած,
Լցվեցավ կամքը, հասավ ժամանակ,
Օրը կըբացվի, — ահա՛ Արուսյակ
Ձեզ հայտնի նշան, ասում է Աստված:
Կրկին մթնացավ: Չքացավ պատկերը:
Երկար ժամանակ դյութական ձայնը
Լըսվում էր խառն ալիքների հետ,
Օդին տիրել էր բուրումն հոտավետ:

Ախորժելի՜ լուր, ավետիք քաղցրիկ,
Որպեսզի՜ հըրճվանք. մուզայդ գեղեցիկ,
Ասա մեզ, մեկնիր, արդյոք հնարի՞ն
Մի մեռած մարմնի զարթնող վերստին . . .